ԵՒՐՈԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ԲԱՆԱՁԵՒԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍԻՆ

Իբրեւ արդիւնք Հ.Ց.Դ. Հայ Դատի Կենտրոնական Յանձնախմբի հետեւողական հետապնդումների եւ անդուլ աշխատանքի, Մարտի 14ի կէսօրից յետոյ Եւրոպական Խորհրդարանը որոշում քուէարկեց Հայաստանի եւ Ղարաբաղի շրջափակման մասին, նաեւ Ղարաբաղում մարդկային իրաւունքների խախտումների գծով։ Ընկերվարականներ՝ Հանրի Սաբին, Ռէյմոնդ Տիտին եւ Էռնէստ Կլինը յանձնեցին Հայ Դատի Յանձնախմբի Նոյեմբերին պատրաստած որոշման ծրագիրը, իսկ պորտուգալցի ընկերվար Քոյիմպրա Մարթինսը փոփոխութիւններ առաջարկեց եւ պաշտպանեց բանաձեւը։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Ա.Նկատի ունենալով, որ Լեռնային Ղարաբաղի բնակիչները 1988ի Փետրուարից ի վեր ԽՍՀՄ կենտրոնական իշխանութիւններից պահանջում են իրենց հարցին մի արդար լուծում,

Բ.Նկատի ունենալով, որ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի 1989թ. Նոյեմբերի 29ի որոշման հետեւանքով զինուորական պարետի կողմից այդ վայրի մէջ մտցուած ստիպողական վիճակը իբրեւ հետեւանք ունեցաւ բոլոր օրինական իշխանութիւնների լուծարքը եւ մարդկային իրաւունքների ոտնահարումը, ինչպէս կամայական ձերբակալութիւններ, գրաքննութիւն եւ տեղահանութիւններ,

Նաեւ նկատի ունենալով, որ 1991ի Մարտի 17ի հանրաքուէն, որին Հայաստանը որոշել է չմասնակցել, ոչ մի լուծում չի կարող բերել Ղարաբաղի հարցին, որ պահանջում է այլ բնոյթի իւրայատուկ հանրաքուէ՝ որ միայն կարող է ապահովել այդ շրջանի բնակչութեան ինքնորոշման իրաւունքը,

Գ.Նկատի ունենալով, որ Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում գոյութիւն ունեցող շրջափակումը, որ երբեմն մեղմանալով հանդերձ յանկարծ զարգանում է, շատ մեծ չափերով սաստկացնում է լարուածութիւնը Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ,

Դ.Նկատի ունենալով, որ Ադրբեջանից 300 հազար հայ փախստականներ (Բաքուի եւ Սումգայիթի սպանդներ) այսօր Հայաստանում ապրում են ծայրայեղ աղքատութեան մէջ եւ կարօտ են օգնութեան,

Ե.Նկատի ունենալով, որ էներգիայի եւ մանաւանդ գազի տագնապը, որից տառապում է Հայաստանը շրջափակման պատճառով, սոյն հանրապետութեան մէջ յարուցում է մեծ անպատեհութիւններ՝ գործարանների փակում, գործազրկութիւն եւ տեղափոխման միջոցների անդամալուծութիւն,

Զ.Նկատի ունենալով, որ երկրաշարժը եւ հայերի սպանդը Ադրբեջանում ի յայտ բերին 500 հազար հաշուող եւ շատ խեղճ պայմանների մէջ ապրող մի բնակչութիւն, որը տառապում է մանաւանդ ջեռուցման պակասից՝ մի շրջանի մէջ, ուր գալիք օրերին ջերմաստիճանը թեւակոխում է նուազ 5,

1.Կոչ է ուղղում նախագահ Գորբաչովին, որպէսզի շատ արագ որոշումներ ընդունուեն, որոշումներ՝ որոնց յաջորդեն գործնական քայլեր, որոնք ի զորու լինեն ամբողջականօրէն եւ վերջնականօրէն դադարեցնելու շրջափակման դրութիւնը Հայաստանում եւ Ղարաբաղում, ինչպէս նաեւ հարուածները՝ Ղարաբաղի եւ մերձակայ շրջանների հայ բնակչութեան հանդէպ (բնակչութիւն, որին կարծես փորձում են բռնի ուժով տեղահանել),

2.Կոչ է ուղղում նախագահ Գորբաչովին, որպէսզի վերականգնուեն Լեռնային Ղարաբաղի օրինական եւ սահմանադրական իշխանութիւնները իրենց իրաւունքների մէջ,

3.Իր նախագահին պարտաւորեցնում է սոյն որոշումը փոխանցել Խորհրդին, Յանձնաժողովին եւ Խորհրդային Միութեան կառավարութեանը։